ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐՈՒՆ ՎԵՐԱԴԱՐՁԸ Ս. ԷՋՄԻԱԾԻՆԵՆ

Երուսաղեմի Ս. Հակոբյանց միաբանության երեց անդամներեն պատրիարքական տեղապահ տեր Եղիշե վարդապետ Տերտերյան, տեր Սուրեն վարդապետ Քեմհաճյան և տեր Նորայր վարդապետ Պողարյան, եպիսկոպոսական աստիճան ընդունելու համար մեկնած էին Ս. Էջմիածին, ընկերակցությամբ Էջմիածնի պատվիրակներ՝ տեր Վահան արքեպիսկոպոս Կոստանյանի և պրոֆ. Աշոտ Արրահամյանի։ Ավելի քան երկու ու կես ամիսներու բացակայութենե մը վերջ, անոնք վերադարձան Ս. Աթոռ, երեքշաբթի, 21 օգոստոս 1951-ի առավան ժամը 10-ին։

Միաբանությունն ու ժողովուրդը, Պաղեստինի ծանոթ դեպքերեն ապին առաջին անգամ ըլլալով, շքեղ ու աննախընթաց ընդունելությամբ մը դիմավորեցին եպիսկոպոսական աստիճանով պսակված տեղապահ ամենապատիվ Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանը և տեր տեր Սուրեն և Նորայր եպիսկոպոսները։

Մինչև Կալանդիո օդակայանը, որ տասը կիլոմետր հեռու կգտնվի քաղաքեն, դիմավորության գացած էին տեր Ռուբեն արքեպիսկոպոս Մանասյան և Ս. Աթոռս ավագ թարգման տեր Հայրիկ վարդապետ Ասլանյան, ինչպես նաև զանազան կազմակերպությանց և միությանց ներկայացուցիչներ, ազգայիններ և ժողովրդային հոծ բազմություն մը։

Ժամը 9.15-ին օդանավը հասավ Կալանդիա և ներկաները անձկագին կուզեին վայրկյան առաջ տեսնել սրբազանները։ Ի վերջո երևցան անոնք և ողջագուրվեցան իրենց հոգևոր եղբայրներուն հետ և ուղղվեցան դեպի ժողովուրդը։ Տեղապահ տեր Եղիշե արքեպիսկոպոս ողջունեց ձեռքով բոլոր ներկաները, որոնք առաջնորդվեցան դեպի սուրբ քաղաք։ Հակառակ իր հառաջացյալ տարիքին, ոչ մեկ տկարություն ցույց կուտար տեր Սուրեն եպիսկոպոս, իսկ Նորայր եպիսկոպոսի լավ վիճակը զարմանք պատճառեց, որովհետև շատ չէր կրնար դիմանալ ճամբորդությանց։ Հայաստանի օդն ու ջուրը և Ս. Էջմիածնա օրհնությունը կարծեք ամեն տեսակետով աղդած էին անոնց վրա։

Եվ ահա ավելի քան քսան ինքնաշարժերու շարքը ուղղվեցավ դեպի քաղաք։ Դամասկոսի դուռը հասնելով կազմվեցավ թափորը։ Առջևեն կքալեին բարապանները իրենց պաշտոնական (սրբմա) հագուստներով և իրենց ասաներով դղրդացնելով գետինը, քաղաքապետական ոստիկաններ հսկողություն կկատարեին և ճամբա կբանային հետզհետե ստվարացող բազմության, հին քաղաքին անշուք փողոցները շատ նեղ կուգային շքախումբին հետևող թափորականներուն։ Վանական իշխանության կողմե նախապես տրված հրահանգին համաձայն, ոչ մեկ ուրախության արտահայտություն, ճիչ, ծափահարություն, թագավորին սպանության հետևանքով։

Տակավ առ տակավ թափորը մոտեցավ հայոց վանքին։ Դավիթի բերդին առջև պզտիկ հրապարակեն հապիվ անցած, դիմավորության եկան օտար պատրիարքությանց և հարանվանությանց ներկայացուցիչները, ինչպես նաև պաշտոնական անձնավորություններ, որոնք միաբանության հետ ընդառաջ եկած էին։

Ապա թափորը շարունակեց իր ընթացքը դեպի Մայր Տաճար։

ԱՌԱՋՆՈՐԴ ՎԱՉԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Օգոստոս 10-ին, ուրբաթ օր, Բուքրեշ վերադարձած է Էջմիածինեն Ռումանահայ թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Պալճյան։ Նորին սրբազնությունը դիմավորելու համար Բրնեասայի օդակայանը գացած են՝ դավանանքի նախարարության կողմե տնօրեն Ի. Ուլսուբաշ, խորհրդականներ, հայ քահանաներ, թեմական խորհուրդի և Բուքրեշի թաղականության անդամներ և այլն և այլն։

Օդակայանեն սրբազանը առաջնորդված է եկեղեցի, ուր եղած է պատճառ ընդունելություն մը, ի ներկայության Ռումանական Օրթոդոքս Եկեղեցվո պետ Ժուստինյան պատրիարքի կողմե՝ պատրիարքական տեղապահ դոկտ. Անտիմ եպիսկոպոսի, պատրիարքական խորհրդականին դոկտ Պրեդայի, Ռուս Օրթոդոքս Եկեղեցվո ներկայացուցիչ հայր Պավելի, հայ քահանայից դասուն, թեմական խորհուրդի ամբողջ կազմին, Բուքրեշի թաղականության և ուրիշ բազմաթիվ հայերու։

Բարի գալուստի խոսքեր ըրած են նախ քահանայից դասուն կողմե տեր Հովհաննես քահանա Ղարիպյան, թեմական խորհուրդի կողմե՝ փաստաբան պարոն Տիգրան Մինաս, դոկտ. Ն. Ֆրունձյան, ապա Ռումանիո պատրիարքին կողմե՝ Անտիմ եպիսկոպոս